Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 20 սեպտեմբերի 2000 թ.:

Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Հայաստանի անկախության 9-րդ տարեդարձի առիթով հետևյալ շնորհավորական ուղերձն է հղել համայն հայությանը.

«Անկախության Օրվա առիթով հայրապետական օրհնությամբ ջերմորեն ողջունում և շնորհավորում ենք Մեր ժողովրդի բարեպաշտ զավակաց ի Հայաստան և ի Սփյուռս:

Բոլոր ժողովուրդների կյանքում մեծագույն իրադարձություն է անկախ պետականության հռչակումը, քանզի ազգաբարում է ազատ ապրելու նրա կամքը և հաստատում անմերժելի իրավունքը: Ազատությունը շնորհ է երկնային, աստվածատուր, անկողոպտելի պարգև, որի մեջ միայն մարդիկ ու ժողովուրդներ ինքնարտահայտվում և ինքնահաստատվում են իրենց ողջ կարողությամբ և ստեղծագործում լիարժեքորեն:

Ազատության բաղձանքից զորություն առած Հայկյան զարկով է ծնունդ առել մեր ժողովուրդը և ազատության քրիստոնեական ճանաչողությամբ ընտրել իր երթը դեպի հավերժություն:

Թանկ ենք ձեռք բերել նորօրյա մեր ազատությունն ու անկախությունը: Վճռական ենք ինքնիշխան մեր Հայրենիքին տեր լինելու բաջությամբ ու պատասխանատվությամբ, այն պահպանելու և ամրապնդելու միասնության ոգով: Անկախության օրվա արբազան խորհուրդը թող լեռնանա մեր հոգիներում, որպես անխորտակ ամրոց՝ դիմազրավելու ամեն փորձություն և որպես նորոգ ուիր՝ շաղկապելու մեր անցյալը, ներկան ու ապագան:

Միրելի հայորդիք, հավատում ենք, որ մեր Հայրենիքի երկնքում նոսագույնի հպարտ ծածանումը հանապազ ջերմացնելու է մեր սրտերը, միավորելով մեզ աշխարհի չորս ծագերում: Հավատում ենք մեր ժողովրդի հանճարակնիք արարող հոգուն, ստեղծագործ մտքին ու կերտող բազկին: Առ Աստված ապավինությամբ հավատում ենք հայոց լուսավոր գալիքին:

Թող Բարձրյալն Աստված զորացնի մեզ մեր պարտքի մեջ և Իր օրհնության ներքո անսասթաք առաջնորդի բոլորիս, նաև՝ հայրենի պետական այրերին, որպեսզի մշտապես արևորված լինի հույսի արշալույսը հայորդյաց կյանքի:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»

ՅԱՎԱԿՑԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 28 սեպտեմբերի 2000 թ.:

Այսօր Հայաստանի Ավետարանչական Ընկերակցության կենտրոն այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու, Հայաստանի Աստվածաշնչական Ընկերակցության Ատենապետ Գերշ. Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը՝ ընկերակցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Տեղեկատվական համակարգի տնօրեն Արշավիր Գաբուճյանի, Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի ներկայացուցիչ, Վերապատվելի Ռընե Լևոնյանին ցավակցություններ հայտնելու Հայ Ավետարանչական Ընկերակցության գործադիր տնօրեն, Վերապատվելի Մովսես Ճանպազյանի անժամանակ մահվան առիթով:

Սրբազան Հայրը, հանուն Վեհափառ Հայրապետի, նշեց կորստի ծանրությունը՝ նկատի ունենալով հատկապես, որ երջանկահիշատակ հոգևոր հովիվը աչքի էր ընկնում էկումենիկ, քրիստոնեական սիրով լեցուն, նվիրյալ և օրինակելի կյանքով:

Այցելության ավարտին Սրբազան Հայրը աղոթեց հանգուցյալ Վերապատվելիի հոգու խաղաղության համար: